



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2017- 22.03/ 296

22.03.2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ

2015 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագիրը և Ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառված որոշ միջոցառումների կատարող են նշված մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ծրագրի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝

6. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելը /2016 թվական/

- Արդյո՞ք թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներկայացվել են առաջարկություններ, եթե այո՝ ում են ներկայացվել առաջարկությունները և ինչ արդյունքներ են գրանցվել *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը)*

13.1 Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում

- Արդյո՞ք ուսումնասիրվել է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքները *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքները)*
- Արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ուսումնասիրության արդյունքների հիման վրա, եթե այո՝ ում և ինչ առաջարկություններ են ներկայացվել և ինչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ առկայության դեպքում տրամադրել առաջարկությունների փաթեթը)*



13.2 Նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձանց, որոնք գտնվում են դադարի /ոեմիսիայի/ շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը, պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկելը /2016 թվական/

- Նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձինք, ովքեր գտնվել են դադարի շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը, արդյո՞ք 2016 թվականին ընդգրկվել են պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում, եթե այո՝ քանի անձ է ընդգրկվել և ինչ ծրագրերում

14. Սոցիալական ծառայությունների շրջանակում՝ թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքների ամբողջական գնահատում և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում /2016 թվական/

- Արդյո՞ք 2016 թվականի ընթացքում գնահատվել են թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքները *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները)*
- Գնահատման արդյունքում արդյո՞ք տրամադրվել է համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթ, եթե այո՝ սոցիալական ինչ ծառայություններ են տրամադրվել, քանի անձի

15. Բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցության ապահովում/2016 թվական/

- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև համագործակցության ապահովման նպատակով և ինչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ առկայության դեպքում տրամադրել կնքված հուշագրի կամ համագործակցության վերաբերյալ այլ փաստաթղթերի օրինակները)*

16. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության ցուցաբերում՝ «Առողջ ապրելակերպ» ծրագրում, «Վնասակար սովորություններ» բաժնում բնակչության շրջանում թմրամոլության կանխարգելման նյութերի ներառում /2016 թվական/

- Արդյո՞ք մեթոդական օգնություն է ցուցաբերվել նախնական և միջին մասնագիտական հաստատություններին, ու՞մ կողմից և ինչպե՞ս
- «Առողջ ապրելակերպ» ծրագրում, «Վնասակար սովորություններ» բաժնում արդյո՞ք ներառվել են բնակչության շրջանում թմրամոլության կանխարգելման վերաբերյալ նյութեր *(խնդրում եմ տրամադրել վերոնշյալ ծրագրերում ներառված նյութերը)*

17.1 Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում /2016 թվական/

- 2016 թվականի ընթացքում արդյո՞ք կազմակերպվել և անց են կացվել ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումներ,